ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 875-Ա

01 սեպտեմբերի 2025 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի 7-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմում 2025 թվականի սեպտեմբերի 2-ին կայանալիք մրցույթների մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով համակարգչում զետեղված թեկնածուների պատահական ընտրության մասին 2025 թվականի մսեպտեմբերի 1-ին կազմված N 1 արձանագրությունը՝

Որոշում եմ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թվով երկու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Շիրակի Նռանե մսուր- մանկապարտեզ» և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրիկի Լիլիթ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2025 թվականի սեպտեմբերի 2-ին կայանալիք մրցույթների մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովի քարտուղար նշանակել Լուսինե Մաթևոսյան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 01
գյուղ Ախուրյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 1-ի
թիվ 875 -Ա որոշման

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԻՐԱԿԻ ՆՈՌԱՆԵ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ԵՎ «ԱԽՈՒՐԻԿԻ ԼԻԼԻԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը	հեռախոսահամար	Էլ. հասցե
1	Հովհաննիսյան Վաղինակ Արամի	Շիրակի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ	0093749490	hovhannisyan.vaghinak@mail.ru
2	Մեքինյան Սարգիս Սամվելի	Շիրակի մարզպետի օգնական	098 54 48 45	sargismekinyann@gmail.com
3	Մաթևոսյան Գեղամ Վաչագանի	Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ	077 05 10 05	gegham.matevosyan77@mail.ru
4	Հովհաննիսյան Սամսոն Գագիկի	Ախուրյան համայնքի ավագանու անդամ	098 85 03 88	sam768-78@mail.ru
5	Սամվելյան Սուրեն Խաչիկի	Ախուրյան համայնքի «Մուրադ Մալխասյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն	098905056	samvelyan-2021@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 876-Ա

<<03>> սեպտեմբերի 2025 թվական գյուղ Ախուրյան

ԺԵՆԻԿ ՎԱՐԴԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԽՈՒՐԻԿԻ ԼԻԼԻԹ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրիկի Լիլիթ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 2-ի եզրակացությունը և հիմք ընդունելով Ժենիկ Վարդանի Խաչատրյանի դիմումը՝

Որոշում եմ

1. Ժենիկ Վարդանի Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրիկի Լիլիթ մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն :
2. Ժենիկ Վարդանի Խաչատրյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր ՝ 5 տարի ժամկետով:
3. Աշխատանքային առաջին օր համարել 2025 թվականի սեպտեմբերի 3-ը:
4. Աշխատավարձը՝ ըստ հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<03>> սեպտեմբեր 2025 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 877-Ա

«03» սեպտեմբերի 2025 թվականի գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՇԱԿ ՍԱՄՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-089-0101-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԿԻՆ ՎԻՃԱԿԻՆ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արշակ Սամվելի Պետրոսյանին (ծնված 1979 թվականի հուլիսի 28-ին) վարձակալության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի տարածքում, Մ-7 միջպետական ավտոճանապարհի հարեւանությամբ գտնվող, 08-089-0101-0008 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքի հողամասում առանց համապատասխան թույլտվության, տարածքում տեղադրել և հողին է ամրակցել 12Х3 մետր չափերի երկու մետաղյա տնակ, իրականցվում է գերեզմանոցների վերանորոգման և կառուցապատման աշխատանքներ, մետաղյա ցանկապատով ապօրենի զավթվել է համայնքապատկան հողամասը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ախուրյանի բաժնի պետի 2025 թվականի հուլիսի 22-ին Ախուրյան համայնքի ղեկավարին հասցեագրված թիվ 72/4-1438 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի և 84-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ **որոշում եմ,**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ բնակավայրի տարածքում, Մ-7 միջպետական ճանապարհի հարևանությամբ գտնվող,

քաղաքացի Արշակ Սամվելի Պետրոսյանին վարձակալության իրավունքով պատկանող 08-089-0101-0008 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր հողատեսքի հողամասում ինքնակամ տեղադրված մետաղյան տնակները տեղահանել և հողամասը նախկին վիճակին բերել, ապօրենի զավթաց համայնքապատկան հողամասը ազատել մետաղյա ցանկապատից, վարձակալին նախազգուշացնելով չկատարելու դեպքում, դրանք իրավասու մարմնի կողմից հարկադրաբար տեղահանելու և տարածքը ազատելու մասին:

2.Իրազեկել քաղաքացի Արշակ Սամվելի Պետրոսյանին՝ երկամսյա ժամկետում սույն որոշումը բողոքարկելու իրավունքի, իսկ չբողոքարկելու դեպքում՝ տեղադրված տնակները չտեղափոխելու և հողամասը նախկին վիճակին վերականգնելու, ապօրենի զավթաց համայնքապատկան հողամասը ազատելու պարտավորությունները չկատարելու հետևանքով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության մասին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահ ել Ախուրյանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ՝ Հովհաննես Սարգսյանին::

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Արշակ Սամվելի Պետրոսյանին իրազեկելու հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ընդունող մարմնին կամ վարչական դատարան դիմելու միջոցով, որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«03» սեպտեմբերի 2025 թվականի
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2025 թվականի N 878-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 1123-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2025 թվականի մայիսի 20-ի թիվ Կ-20052025-08-0178 որոշումը՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 08-037-0012-0003 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում գտնվող 0.041038 հեկտար մակերեսով հողամասում քաղաքացի՝ Արթուր Ռազմիկի Մխիթարյանի կողմից ինքնակամ կառուցված արտադրական նշանակության պահեստը օրինական ճանաչելու և այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան Համայնքի սեփականությունը համարելու մասին» թիվ 1123-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«04» սեպտեմբերի 2025 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 879-Ա

<<04>> սեպտեմբերի 2025 թվական գյուղ Ախուրյան

ՍԻՐԱՆՈՒՇ ԽՈՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԻՐԱԿԻ ՆՌԱՆԵ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Շիրակի Նռանե մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 2-ի եզրակացությունը և հիմք ընդունելով Սիրանուշ Խորենի Հարությունյանի դիմումը՝

Որոշում եմ

1. Սիրանուշ Խորենի Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Շիրակի Նռանե մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն :

2. Սիրանուշ Խորենի Հարությունյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր ՝ 5 տարի ժամկետով:

3. Աշխատանքային առաջին օր համարել 2025 թվականի սեպտեմբերի 4-ը:

4. Աշխատավարձը՝ ըստ հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<04>> սեպտեմբեր 2025 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 880-Ա

«04» սեպտեմբերի 2025 թվականի գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, **որոշում եմ**

1. Հաստատել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի.

1) Խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկերի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«04» սեպտեմբերի 2025 թվականի
գյուղ Ախուրյան

Հավելված N 1
Ախուրյան համայնքի ղեկավարի
«04» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 880-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի աղետների ռիսկերի կառավարման խորհրդի կազմը՝

1. Խորհրդի ղեկավար՝ Զ. Մանուկյան /Ախուրյան համայնքի ղեկավար/,
2. Խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ /համայնքի ղեկավարի տեղակալ/,Կ.Սերգոյան
3. Խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Սեդա Մարգարյան,
4. Խորհրդի անդամներ՝

Ավագանի՝ Մանուկ Առաքելյան,
Ավագանի՝ Հակոբ Ոսկանյան,
Բնակավայրի վարչական ղեկավարներ՝

Հացիկ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Կ. Պետրոսյան,
Կամո	բնակավայրի վարչական ղեկավար՝ Է. Պապիկյան,
Շիրակ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Հ. Ասատրյան,
Բասեն	բնակավայրի վարչական ղեկավար՝ Վ. Թադեվոսյան,
Արևիկ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Հ. Միքայելյան,
Լեռնուտ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Վ. Մխիթարյան ,
Կառնուտ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Գ. Գաբոյան,
Հովիտ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Սերոպյան,
Այգաբաց	բնակավայրի վարչական ղեկավար Ս. Վանեցյան,
Հովունի	բնակավայրի վարչական ղեկավար՝ Լ. Խաչատրյան,
Փոքրաշեն	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռ. Վարդանյան,
Կապս	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Մարգարյան,
Ջաջուռավան	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Գրեյան,
Մեծ Սարիար	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Սարգսյան,
Քեթի	բնակավայրի վարչական ղեկավար՝ Վ. Սարգսյան,
Մարմաշեն	բնակավայրի վարչական ղեկավար՝ Տ. Տիգրանյան,
Ախուրիկ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Սարգսյան,
Ազատան	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Ոսկանյան,
Հայկավան	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Մարդեյան,
Առափի	բնակավայրի վարչական ղեկավար՝ Գ. Սաֆարյան,

Ոսկեհասկ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Սահակյան,
Երազգավորս	բնակավայրի վարչական ղեկավար Ա. Ալեքսանյան,
Վահրամաբերդ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Հովհաննիսյան,
Մայիսյան	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Բաղդասարյան,
Ջաջուռ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Հ. Ռաֆայելյան,
Կրաշեն	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Գալոյան,
Ջրառատ	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Խաչատրյան,
Բայանդուր	բնակավայրի վարչական ղեկավար՝ Բ. Սաղաթելյան,
Բենիամին	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Անտոնյան,
Գետք	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ն. Հարությունյան,
Ղարիբջանյան	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս. Գևորգյան,
Կարմրաքար	բնակավայրի վարչական ղեկավար՝ Ա. Մաթեևոսյան,

1) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ կապիտան Համբարյան /53 հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար/(համաձայնությամբ),

բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Կոլյա Մարտիրոսյան Ախուրյանի համայնքային ոստիկանության բաժամունքի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր /(համաձայնությամբ),

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Վլադիմիր Հովհաննիսյան /«Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ տնօրեն/(համաձայնությամբ),

դ. կապի պատասխանատու՝ Վաղինակ Հովսեփյան /Ախուրյանի համայնքապետարանի աշխատակից/(համաձայնությամբ),

ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Միխայել Մկրտչյան /«Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն/(համաձայնությամբ),

զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Արմինե Սահակյան /համայնքապետարանի գլխավոր մասնագետ/,

է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Սամվել Հայրապետյան /« էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-Ի ինժիներ/(համաձայնությամբ),

ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Լիպարիտ Տիգրանյան /համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ/,

թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Արա Ղանդիլյան/համայնքապետարանի իրավաբան գլխավոր մասնագետ/,

ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Անի Մկրտչյան/համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ/:

Հավելված N 2
Ախուրյան համայնքի ղեկավարի
«04» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 880 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) սահմանվում են համայնքի աղետների ռիսկերի կառավարման խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Ախուրյանի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկերի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկերի կառավարման պլանի ճշգրտումը:

2. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 881-Ա

«05» սեպտեմբերի 2025 թվականի գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի Հայաստանի Հանրապետության 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով՝ **որոշում եմ,**

1. Հաստատել 2025 թվականի աղետների ռիսկերի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկերի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկերի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«05» սեպտեմբերի 2025 թվականի
գյուղ Ախուրյան